

Կարելի էր դրացիներէ հաց ու թթխմոր փոխ առնել ու վերադարձնել, առանց կարեւորութիւն տալու ցորեն կամ հաճարէ եփուած ըլլալուն :

Ծննդարեւութեան քառասունքէն ելլող կիներ առտուանց ջուրի ճամբուն վրայ իրենց դէմը ելլող առաջին անձին անխօս կուտային հացի նկանակ մը :

Գիւղերէ ու լեռներէ հազուադիւս պտուղ, խոզաքի, սինձ, ալոճ, իսկ ամբան տաքին ալ մաղէ չուալներու մէջ Արդէնոսէն ձիւն կը բերէին էփէրէկ-Ֆէնէսէ, հացով փոխանակելու համար : Գեռ կը յիշուի անոնց կանչը, Ղա՛ո հա, դա՛ո հա, Յայլա Պուզո՛ւ :

Մ Ս Ա Յ Ո Ի

Ձմրան պատրաստութեան մէջ մեծ տեղ ունէր մսացուն :

Ընտանիքներ իրենց անդամներու եւ կարողութեան չափով կ'ընէին իրենց գնումները :

Ընդհանրապէս կով մը, կէս կով կամ ոչխար մը ապահովելով կը պատրաստէին ապուխտ (չորմիս), երշիկ, խաչ, աղած միս եւ Սըզդըթ (Գափուրմա) :

Ապուխտը մասնաւորապէս կտրուած, ճնշուած, աղուած ու չորցուած՝ հանրածանօթ պաստրբման է, տան համար շինուած :

Երշիկը (իրիշկիկ) նոյնպէս սխտորով ու նոյն համեմներով շաղուած՝ ծեծուած մսի չոր պաշարն է, չոր աղիքի մէջ լեցուած ու զոյգ բաժանումով մատ մատ օղակուած :

Ապուխտի վէրթերուն տէփրէկ անունը կուտային, անկասկած աղաւաղումը տափարակ բառի :

Չորմիսի տէփրէկները երկար ատեն տէնկի, ծանրութեան տակ դրուած կ'ըլլային :

Երշիկի շարոցներուն տիւզիւմ անունը կուտային իսկ մնացեալ զոյգ մասներուն պօզոււմ եւ անջատներու՝ մատ մը իրիշկէկ կ'ըսէինք :

Կլիման չոր ըլլալուն կովի դճխու, ոտքերու ու ստամոքսի մասերը կարելի էր առատ աղով չորցնել ու ամբարել : Ասոնցմէ կը շինուէր խաչը :

Տարուայ ամէն ամիսներուն միս դտնել կամ թարմ պահել կարելի չէր, ատոր համար տանտիկինը միշտ պատրաստ կ'ունենար հալած ճարպի մէջ խորոված միս, սըզդըթ : Իր իւզին մէջ խորովուելէ վերջ՝ դափուրման կը լեցուէր ամաններու մէջ : Հոն պաղելէ վերջ յաճախ կը հանուէր ու կը կախուէր ապահով տեղեր :